

ձայն¹, Սանահնի և Հաղբատի վիմական արձանագրությունների առաջին ժողովածուն կազմել է Հովհաննես վարդապետ Ղրիմեցին Եփրեմ կաթողիկոսի ժամանակ (1809—1830) և հավանաբար նրա հրամանով:

Ղրիմեցու կազմած ժողովածուն հետագայում՝ 1863 թվականին, հրատարակվեց Գիտությունների Սանկտ-Պետերբուրգի կայսերական Ակադեմիայի տեղեկագրի մեջ ուսերեն թարգմանությամբ և ակադեմիկոս Բրոսեի ֆրանսերեն հավելված հոդվածով²:

Ղրիմեցու այդ ժողովածուն ունի Սանահնի վանքի ընդամենը 63 արձանագրություն, որ եղածի կեսիցն էլ պակաս է: Սակայն ժողովածուի կազմությունից երևում է, որ հեղինակը նպատակ չի ունեցել վանքի բոլոր արձանագրություններն ընդգրկելու, որովհետև նա վանքի նկարագրությունը և պատմությունը շարադրել է ժամանակագրական կարգով, ըստ միմյանց հաջորդող՝ վանքի առաջնորդների և արձանագրությունները մեջ է բերել այս կամ այն կապակցությամբ: Այդպիսով, նա ներկայացրել է գրեթե միայն այն արձանագրությունները, որոնք կապված են վանքի առաջնորդների անվան հետ: Բացի այդ, նա ուշադրություն չի դարձրել բազմաթիվ արձանագրությունների վրա, որոնք, նրա կարծիքով, պատմական կամ գիտական արժեք չեն ներկայացրել: Նա չի ընդօրինակել դրժվար վերծանվող, մաշված և եղծված արձանագրությունները: Ղրիմեցին աչքաթող է արել Սանահնի վանքի գավիթներում և բակում եղած բազմաթիվ տապանագրերը, որոնց մեջ կան պատմական անձնավորությունների մասին կարևոր տեղեկություններ:

Ղրիմեցին արձանագրությունները կարգացել է բազմաթիվ սխալներով, որոնցից կարևորները մենք նշել ենք մեր ժողովածուի արձանագրությունների վերծանության բաժնում: Այդ սխալներն առաջ են եկել ոչ միայն արձանագրությունների մեջ գործածված զանազան բառեր չհասկանալուց, այլև հաճախ անուշադրության հետևանքով: Ղրի-

մեցու և, ընդհանրապես, վիմական արձանագրությունների բոլոր հին հրատարակիչների գլխավոր սխալն այն է, որ արձանագրությունների լեզուն խմբագրել են իրենց գիտեցած գրոց լեզվով և դրանով իսկ զգալիորեն հեռացել արձանագրության լեզվից:

Սանահնի վիմական արձանագրությունների երկրորդ հավաքածուն 1841 թվականին կազմել և 1842-ին էլ հրատարակել է Սանահնի վանքի միաբան Սարգիս վարդապետ Ջալալյանցն իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» երկհատոր գրքի առաջին մասում: Ջալալյանցն այդ աշխատանքը կազմել է ներսես Աշտարակեցու հրամանով: Նրա ժողովածուն պարունակում է վանքի 68 արձանագրություն³:

Ջալալյանցը նպատակ է ունեցել, ինչպես ինքն է ասում իր գրքի առաջաբանում՝ «...ղամենայն արձանագրութիւնս, գրոշմեալս ի վէմս և յորձատաշ քարինս եկեղեցեաց, վանօրէից, բերդից, և ապարանաց, օրինակեալ ամենայն ստուգութեամբ՝ մատուցանել ազգի մերում»⁴, որպեսզի, նախ ամեն որ իմանա, ուր մեր ազգն էլ ունի կատարած մեծագործություններ և ապա՝ այդ արձանագրությունները փրկվեն բնության կործանիչ ուժի ազդեցությամբ ոչնչանալուց:

Սակայն Ջալալյանցն իր առաջադրած նպատակը հետևողական կերպով չի իրագործել, և նրա ժողովածուն քիչ բանով է տարբերվում Ղրիմեցու գործից: Հիմնական նյութը երկուսի մոտ էլ նույնն է, բայց Ջալալյանցի ընդօրինակություններն ավելի աղավաղված ու թերի են, մանավանդ որ սա ևս Ղրիմեցու նման արձանագրություններն ընդօրինակել է ընտրությամբ, թեև իր գրքի առաջաբանում խոստացել է ընդօրինակել «ղամենայն արձանագրութիւնս... ստուգութեամբ»:

Գրականության մեջ այն կարծիքն է տարածվել, որ Ջալալյանցը Սանահնի, ինչպես նաև Հաղբատի արձանագրություններն

¹ «Արձագանք», 1884, էջ 628:

² Описание монастырей Ахпатского и Санагинского архимандрита Иоанна Крымского. Description des monastères arméniens d'Hachbat et de Sanahin, par l'archimandrite Jean de Crimée, avec notes et appendice par M. Brosset. St.-Petersbourg, VII serie, t. VI, № 6.

³ Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատութեամբ Սարգիս վարդապետի Ջալալանց, ժամանակ, 1842, ի Տփլիս:

⁴ Անդ, էջ 6: